Հայաստանի Հանրապետություն
Արմավիրի մարզ
Արգավանդի գյուղապետարան

գ.Արգավանդ
☎ /093.62-59-85/
«11» «07» 2013թ.
N

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ՝ Ա ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

Արգավանդ համայնքի 2013 թվականի I-ին կիսամյանկի հաշվետվություն

2013 թվականի հուլիսի 10-ին ժամը 14^{00}-ին Արգավանդի մշակույթի տանը կայացավ համայնքի ընդհանուր ժողով, մասնակցությամբ մարզպետարանի ներկայացուցիչ Վ. Աբրահամյանի և համայնքի 30 անդամների:

Նախագահությամբ՝ Մ. Աղաջանյանի

Քարտուղարությամբ՝ Ա. Գևորգյանի

Օրակարգում

1. 2013 թվականի բյուջեի I/ին կիսամյակի ընթացքում համայնքի ղեկավարի կատարած աշխատանքների վերաբերյալ հաշվետվություն:

Զեկուցող՝ Ա. Աղաջանյան

Զեկուցողը նշեց, որ 2013թ. ֆինանսական տարին սկսել է առանց որևէ աշխատավարձի, եկամտային հարկի, էլեկտրաէներգիայի և այլնի պարտքերի: 2013թ. I-ին կիսամյակի բյուջեի կատարողականը և ծախսայինը՝ տես աղյուսակ N1, N2

N 1 2013 թ. Արգավանդ համայնքի կիսամյակային բյուջեի մուտքեր

Անվանումը	2013 թ. բյուջեն	կիսամյակ. Պլանային	փաստացի	կատ. %
Վարչական բյուջեն ընդհ.	43800.0	18058.6	16172.4	90
Հողի հարկ	9000.0	1500.0	612.0	41
Գույքահարկ	1590.0	940.0	723.7	77
Ընդ. Տեղ տուրք	270.0	135.0	47.1	35
Տեղական վճար	360.0	70.0	---	---
Վարձակալական հող	2600.0	600.0	159.5	27
այլ ոչ հարկ. Եկամուտ	1352.5	500.0	321.5	65
Դոտացիա	28627.1	14313.6	14313.6	100
Վարչական բյուջեից/ պահ. ֆոնդ/ կատ հատկ	900.0	900.0	270.5	
համ. սեփ. համարվ. գ. օտար	5800.0	5800.0	186.6	4
տարեսկզբի ազատ մնացորդ	306.3	306.3	306.3	
ընդհանուր եկամուտ	49906.3	24164.9	16670.3	69

N 2 2013 թ. կիսամյակային բյուջեի ծախսերը

Անվանումը	2013 թ. տարեկան պլան	կիսամյակ. Պլան	փաստացի	կատ %
Վարչական բյուջեն ընդհ.	44083.4	18342.0	16169.3	89
տեղական ինքնակառավարում	25519.4	10060.0	9722.5	97
կրթություն, գիտություն, մանկապարտ.	7900.0	2450.0	2400.0	98
սոց. Օգնություն	700.0	400.0	400.0	100
մշակույթ, գրադարան	2720.0	1360.0	667.5	49
աղբաթափություն	1800.0	900.0	736.8	82
Տրանսպորտ, ճանապարհային տնտես.	544.0	272.0	44.0	17
բնակարանային տնտ/լույս, գազ/	3800.0	2000.0	1928.0	97
պահուստային ֆոնդ	1100.0	900.0	270.5	
ֆոնդային բյուջե	6722.9	6722.9	480.0	8
կապիտալ շինարարություն	4000.0	4000.0	---	---
Սարքեր-սարքավորումների ձեռք բերում	1022.9	1022.9	---	---
Նախագծային ծախսեր	300.0	300.0	---	---
Կապիտալ նորոգումնան ծախսեր	1400.0	1400.0	480.0	35
Ընդամենը ծախսեր	49906.3	24164.9	16378.8	68

Գյուղապետարանը Ի-ին կիսամյանկում ունի մեկ ամսվա պարտք, որը կվճարի հուլիս ամսին իսկ ելամտային հարկի և էլեկտրաէներգիայի պարտքեր չկան: Գյուղում կատարվում է աղբաթափման աշխատանքներ: Գործում է մանկապարտեզը՝ որտեղ հաճախում է 60 երեխա:Ելույթ ունեցան համայնքի բնակիչներ՝ Յ.Հակոբյանը, Վ. Պետրոսյանը, Հ. Մաթևոսյանը:Նրանք գնահատեցին գյուղապետարանի աշխատանքները բավարար և հույս հայտնեցին, որ նախահաշվային աշխատանքները կկատարվի:Ինչպես նաև աշխատանքներ կկատարվեն համայնքի բնակչության սոցիալտնտեսական պայմանները բարելավելու համար: Հարց բարձրացվեց դիմել Արմավիրի մարզի մարզպետ պարոն՝ Ա.Ղահրամանյանին Արգավանդ համայնքում առավելագույն կարևոր առկա խնդիրների՝

1. Մանկապարտեզի
2. Խմելու ջրագծի
3. Ներքին ոռոգման ցանցի

վերանորոգման աշխատանքների մասին:

Հույս հայտնեցին, որ մարզպետ՝ Ա.Ղահրամանյանը կընդառաջի համայնքի առկա խնդիրներից որևէ մեկը 2013 թվականի Ի–րդ կիսամյակի ընթացքում կյանքի կոչելու համար:

Արգավանդ համայնքի
ղեկավար՝ *Ա.Աղաջանյան*